ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/132

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16532-18 գրությամբ «ԹԱՍԿ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի 10.09.2018թ. թիվ 01/29-908 գրության հիման վրա, 13.09.2018թ. «ԹԱՍԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը 10.09.2018թ. թիվ 01/29-908 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/ԹԾՍ-1 գնանշման հարցման ընթացակարգին, որի բացման նիստը տեղի է ունեցել 31.08.2018թ., գնային առաջարկ է ներկայացրել «ԹԱՍԿ» ՍՊԸ-ն: ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/ԹԾՍ-1 գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԹԱՍԿ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից: Սակայն, համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.09.2018թ. ներկայացված տեղեկատվության՝ «ԹԱՍԿ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 31.08.2018թ. հարկային մարմնի կողմից վերակհսկվող եկամուտների գծով ունի 105.000 ՀՀ դրամի չափով պարտավորություն:

Նկատի ունենալով վերը նշվածը, գնահատող հանձնաժողովը քննարկել և որոշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի հայտը մերժել:»:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՊՈԱԿ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԹԱՍԿ» ՍՊԸ-ն 18.09.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

««ԹԱՍԿ» ՍՊԸ-ն տարիներ շարունակ պատշաճ կերպով գործունեություն է ծավալում գնումների գործընթացի շրջանակներում և պատշաճ կերպով մշտապես կատարել է հարկային պարտավորությունները: Ընկերությունը մշտապես հարկային պարտավուրությունները իրականացրել է գերավճարով և հարկ վճարողի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում «անձնական գրասենյակի» միջոցով իրականացված ընկերության ունեցած պարտավորությունների

ստուգումները հավաստում են, որ վերջինս ժամկետանց պարտավորություններ չունի: 31.08.2018թ. մասնակցել ենք «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար հայտարարված ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/ԹԾՍ-1 ծածկագրով գնման ընթացակարգին և համարվել ենք առաջին տեղը զբաղեցրած մասնակից: Սակայն պատվիրատուի կողմից իրականացված հարցման վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը խաթարում է ընկերության գործունեության բնականոն ընթացքը և բարի համբավը և խնդրի կարգավորման համար ընկերությունը դիմում-բողոք է ներկայացրել ՀՀ ՊԵԿ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովին:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի տնօրեն Թևոսյան Ակսելը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/132 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16532-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 10.09.2018թ. թիվ 01/29-908 գրությունը, ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/ԹԾՍ-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/ԹԾՍ-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 31.08.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 և 05.09.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի 18.09.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 09.10.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված թիվ 03/11-1/60020-18 գրությունը, 31.08.2018թ. դրությամբ «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.09.2018թ. տրված եզրակացությունը.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ թուղթ ծալող սարք ձեռք բերելու նպատակով կազմակերպված ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/ԹԾՍ-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԹԱՍԿ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/ԹԾՍ-1 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը՝

- 31.08.2018թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրությամբ որոշել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԹԱՍԿ» ՍՊԸ-ին:

- նույն արձանագրությամբ որոշել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.09.2018թ. տրամադրած եզրացության համաձայն՝ «ԹԱՍԿ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 105.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Հանձնաժողովը 05.09.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով որոշել է մերժել «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (31.08.2018թ.) ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն՝ 105.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ առաջացած 105.000 ՀՀ դրամ գումարի

չափով ժամկետանց հարկային պարտավորությունը, գոյացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարների գծով, սակայն այն հանգամանքը, որ դրոշմանիշների վճարը վերհսկվող եկամուտների գծով առանձին վճարման ենթակա պարտավորություն է, որևէ տեղ արտացոլված չէ: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «ԹԱՍԿ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրվա դրությամբ (31.08.2018թ.) հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի, և Ընկերությունը հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները:

Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց 31.08.2018թ. դրությամբ «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, որի համաձայն՝ Ընկերությունը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունի:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 09.10.2018թ. թիվ 03/11-1/60020-18 գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

««Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսված են պետական հարկերը և պետական վճարները, որոնց նկատմամբ հսկողությունը վերապահված է հարկային մարմնին:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված են հարկային եկամուտները:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով նույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է: Նույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, մասնավորապես՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճարը վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգով հարկային մարմնի կողմից տրամադրվել են տեղեկություններ հարկ վճարողների ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «ԹԱՍԿ» ՍՊԸ-ն պարտավորությունները կատարելիս առաջնորդվել է բացառապես էլեկտրոնային համակարգի անձնական գրասենյակում անձնական հաշվի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև հաշվի առնելով դրոշմանիշային վճարների պարտավորությունները որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ համարելու վերաբերյալ հարկ վճարողի իրազեկված չլինելու հանգամանքը, խնդրում ենք, «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը, գնումների գործընթացին մասնակցության առումով չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:»:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ. եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի

շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում

հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ թուղթ ծալող սարք ձեռք բերելու նպատակով կազմակերպված ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-18/ԹԾՍ-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է

Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին

- 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 04.09.2018թ. Հանձնաժողովին ներկայացրած եզրակացության համաձայն՝ «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա (31.08.2018թ.) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գումարը կազմել է՝ 105.000 ՀՀ դրամ:

- «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերհսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- «ԹԱՍԿ» ՍՊԸ-ն հայտը ներակայացնելու օրը առաջնորդվել է Ընկերության «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն՝ «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի՝ հայտը ներակայացնելու օրվա (31.08.2018թ.) դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն առկա չէ:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում «ԹԱՍԿ» ՍՊԸ-ի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ընկերության իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ընկերությունն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը կարող էր ձեռք բերել բացառապես Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, հետևաբար «ԹԱՍԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16532-18 գրությամբ «ԹԱՍԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ